ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նարա Անդրանիկի Հովհաննիսյան - Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 քոլեջի տնօրեն:

Գործուղման վայրը և ժամկետները - Գերմանիայի Հանրապետություն, ք. Օֆֆենբախ, 2026թ մարտի 16-20:

Հրավիրող կողմը - Գերմանիայի Մասնագիտական կրթության, աշխատաշուկայի և սոցիալական քաղաքականության ինստիտուտ (INVOLAS):

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Գերմանիայի Օֆֆենբախ քաղաքում կայանալիք «ERASMUS+» QA4VET ծրագրի սեմինարին մասնակցություն:

Քննարկված թեմաները.

Erasmus+ ծրագրի «Mock հավատարմագրման ներդրում՝ աջակցելու հայկական ՄԿՈՒ հաստատություններում որակի ապահովմանը» (QA4VET) կարողությունների զարգացման նախաձեռնության շրջանակում կազմակերպված աշխատաժողովի հիմնական շեշտը դրված էր թվային և կանաչ հմտությունների զարգացմանը:

Աշխատաժողովի նպատակն էր զարգացնել ՀՀ ՄԿՈՒ հաստատությունների կարողությունները՝ մշակելու և ներդնելու որակի ապահովման արդյունավետ մեխանիզմներ: Հատուկ ուշադրություն է դարձվում «Mock» հավատարմագրման գործիքին՝ որպես ինքնագնահատման, շարունակական բարելավման և եվրոպական չափանիշներին համապատասխանեցման կարևոր միջոց:

Ծրագրի շրջանակում մասնակիցները հնարավորություն են ստացել ծանոթանալու գերմանական ՄԿՈՒ համակարգին, ուսումնասիրելու որակի կառավարման առաջադեմ մոտեցումները, ինչպես նաև քննարկելու կրթություն-աշխատաշուկա համագործակցության արդյունավետ մոդելները:

Այս նախաձեռնությունը կարևոր քայլ է Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի մշակույթի զարգացման, միջազգային փորձի ներդրման և կրթական գործընթացների արդիականացման ուղղությամբ:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Ինքս ելույթ չեմ ունեցել և ակտիվորեն մասնակցել եմ Գերմանիայում Դուալ կրթական համակարգի վերաբերյալ քննարկումներին:

Աշխատաժողովի օրակարգին և զեկույցներին կարող եք ծանոթանալ ծրագրի կայքում՝ **https://qa4vet.acep.am/**

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման վերջում պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկա հանդիպումը կազմակերպել ս/թ Հայաստանում հուլիսի 1,2-ին, որի ժամանակ կքննարկվի նաև աշնանը Հայաստանում մեծ աշխատաժողով անցկացնելու հարցը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

9. **Ստորագրությունը, ամսաթիվը: 27.03.2026թ.**